ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն ---------------- Հ. ԴԱՎԹՅԱՆ

«------» ---------------- 2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մուշեղ Գալշոյանի անվան 148 ավագ դպրոց

ուսումնական հաստատության անվանումը ,

12-5 դասարան

Քրիստինե Մկրտչյան Արզումանի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2022- 2023» ուսումնական տարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1.Ներածություն/դասարանի ընդհանուր բնութագիր/

12-5 դասարանը արհեստագործական հոսքին է պատկանում,դասարանում սովորում է 19 աշակերտ՝11 աղջիկ և 8 տղա, ունի մշակութային տարբեր խմբերի կրողներ են աշակերտները: Դասարանում կան սոցիալապես անապահով, ոչ լիարժեք ընտանիքից երեխաներ: Դասարանում կան արվեստագետ երեխաներ՝նկարչական և երաժշտական կարողություններով: Հիմնական մասը հավասարակշիռ անձնավորություններ են, ունենպատասխանատու ծնողներ, որոնց դաստիարակության պտուղները տեսանելի են աշակերտների անձի ձևավորման մեջ:

2.Ուսումնադաստիրակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.

Ուսումնադաստիարակչական աշխատանքի երկու հիմնական ուղղվածությունները կրթական որակի բարձրացումն է և դաստիարակության բացերի լրացումը: Առաջինի մասով հիմնաբար է հանդիսանում օրինակ, դասալսումները, երկրորդի համար հիմնաբար է հանդիսանում բաց դասերի ընթացքում իրականացված թեմաների քննարկումը, արտադասարանական միջոցառումները և այլն:

3.Հայեցի դաստիարակություն.

3.1 Հոգևոր դաստրարակություն.

Հոգևոր դաստիարակությունը հիմնված է մշակութային, կրոնի, լեզվի, և այլ ազգային արժեքների ճիշտ արժևորման հիման վրա, որի համար նպաստավոր են դասղեկական ժամերի ընթացքում քննարկվելիք թեմաները: Այս բաժնում կրոնի և հավատի մասին լիարժեք տեղեկատվական և պատմական ուղեցույցը պարտադիր թեմա է: Կարևոր հիմք է պատմության խորքից մեզ ուղեկցող իրադարձությունները, որոնք կապ ունեն կրոնի ընտրության, հավատի, հոգևոր արժեքների հետ: Այս թեմաների քննարկումը նույնպես պարտադիր կետ է:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Գեղագիտական դաստիարակությունը սկսվում է գեղեցիկը տեսնելու կարողությունը զարգացնելուց: Սրա համար նպաստավոր է այս հոսքի ուղղվածությունը՝ կերպարվեստը, դիզայնը, արվեստի պատմությունը և այլն: Ուսուցման հետ մեկտեղ, դասղեկական ժամերի թեմաներից մեկը այս ոլորտների իրական արժեքների կարևորման մասին է:

Գեղեցիկը տեսնելու կարողությունը նաև ամրապնդում է վերաբերմունքը և խնամքը գեղեցիկի, էսթետիկի հանդեպ: Բնության գրկում արտադասարանական միջոցառումները այս տեսակի դաստիարկության նպատակային գործողություններից մեկն է:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմքը պատմության իմացությունն է, դարեր շարունակ և մինչ այսօր պատերազմական երկրում ապրելու հանգամանքը կարևորում է կրկնակի այս դաստիարակության իրական իմաստը: Թեմատիկ զրույցները դասղեկական ժամերին վերաբերում են այս ուղղությանը նույնպես: Զրույցների թեման հայրենիքն է, պատերազմական երկրի դրությունը, անցյալն ու ներկան և այլն:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն.

Ֆիզիկական դաստիարակությունը արժևորելու համար դասղեկական ժամերին շոշափվող թեմաներից կարևորագույնը՝ առողջ հոգի առողջ մարմնում: Կարևորվում է անվճար սպորտով զբաղվելու և օրգանիզմը առողջ պահելու մոտիվացիաներից մեկը: Տեխնիկապես չհագեցած սպորտային դահլիճները դեռևս պատճառ չէ ֆիզիկական պատրաստվածությունը թերագնահատելու համար: Այս ուղղությամբ նույնպես վարվում են զրույցներ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակությունը զարգացնելու համար իրատեսական են դասարանի մաքրության և հիգիենային վերաբերող փոքրիկ աշխատանքներ իրականացնել: Դասարանը մաքուր պահել, հետևել դասարանի հարդարանքի գույքի պահպանմանը: Աշխատանքային դաստիարակությանը խթան է հանդիսանում նաև թեթև գրաֆիկով աշխատանքները անչափահասների համար, որոնք այժմ խրախուսվում են և իրատեսական են:

3.6 Բնապահպանական դաստիարակություն.

Դասղեկի ժամերին քննարկվող կարևորագույն թեմաներից է շրջակա աշխարհի հանդեպ վերաբերմունքը: Պահպանել սեթական հիգիենան, հետևել շրջապատի մաքրությանը, պահպանել բնությունը, աղբը թափել աղբամանում, մասնակցել ծառատունկերի և այլն: Կարևորումը այս թեմայի պետք է ուղեկցվի հստակ գործողություններով և դասղեկի սեփական օրինակով:

3.7 Դպրոց -ընտանիք կապը

Դպրոց–ընտանիքի կապի համար նպաստավոր են ծնողների խումբը՝ դասղեկի մասնակցությամբ և ակտիվ համագործակցությամբ: Աշակերտի ընտանիքից եկող խնդիրը պարզաբանելու համար անհրաժեշտ է կապը ծնողի հետ: Մեկ այլ կողմից: Ընտանիքը պետք է վստահի դպրոցին, դասղեկին, ուսուցչին իր երեխային համոզված լինի համատեղ աշխատանքի արդյունավետության վրա:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

Սեպտեմբեր

1շաբաթ –Ծանոթություն, կարևոր կարգապահական կանոնների և խնդիրների վերլուծություն

2շաբաթ – Միջանձնային փոխհարաբերություններ, նոր աշակերտների ներգրավում

3շաբաթ– Առարկայական առաջադիմության հիմնախնդիրների վերկություն

4շաբաթ –**44** օրյա արցախյան պատերազմ, նախապատմություն, հարգանքի տուրք

Հոկտեմբեր

1 շաբաթ – Արտադասարանական միջոցառումների կարևորությունը, նախապատրաստություն

2 շաբաթ – Ուսուցչի օր, ուսուցչի դերը մեր կյանքում

3 շաբաթ – Դասապրոցեսին խոչնդոտող հանգամանքների վերլուծություն

4 շաբաթ – Աշնանային արձակուրդներ

Նոյեմբեր

1 շաբաթ – Մարդը և հասարակությունը, բաց դաս

2 շաբաթ – Նոր հետաքրքրություններ բացահայտում, մասնագիտական ուղղություններ

3 շաբաթ – Աշուն, թեմատիկ պոեզիա, ֆնարական ժամ

4 շաբաթ – Հայաստանի ճամփեքով, տեսարժան վայրերի մասին տեղեկություն

Դեկտեմբեր

1 շաբաթ – Հայկական տոներ, ծեսեր, մշակութային փառատոներ

2 շաբաթ – Առարկայական օլիմպիադաների կարևորում

3 շաբաթ – Ուսումնական առաջին կիսամյակի ամփոփում, խնդիրների վերծանում

4 շաբաթ – Ձմեռային արձակուրդներ

Հունվար

1 շաբաթ – Հայրենիք.Պատերազմ և խաղաղություն

2 շաբաթ – Կրոն, հավատ, կրոնի պատմություն

3շաբաթ – Հայ և համաշխարհային գրականության էջեր

4 շաբաթ – Տրամաբանությունը և անալիտիկ մտածողությունը

Փետրվար

1 շաբաթ – Հոգեբանություն, մասնագետի ներկայություն, հոգեբանական թեստ անհատի և անձի ձևավորման վերաբերյալ

2 շաբաթ – Հեթանոսական ծեսերի վերակերպումն ու մասնակի միաձուլումը քրիստոնեական ծեսերին

3 շաբաթ – Առարկայական շաբաթ, Քիմիա, Հասարակագիտություն

4 շաբաթ – Դասասենյակի հարստացում դիդակտիկ պարագաներով

Մարտ

1 շաբաթ – Գարունը, պոեզիան, մայրության տոն

2 շաբաթ – Առարկայական շաբաթ. Կենսաբանություն, Արվեստի պատմություն

3 շաբաթ – Ֆիզիկական կուլտուրայի կարևորությունը մեր կյանքում

4 շաբաթ – Կերպարվեստը որպես մասնագիտական թեքում՝

Ապրիլ

1 շաբաթ – Ապրիլյան հերոսամարտ

2 շաբաթ – Առարկայական շաբաթ – Հ.լեզու, Հ.Գրականություն

3 շաբաթ – Հայոց Մեծ Եղեռն

4 շաբաթ – Բնությունը՝որպես մարդկության կենսական կարևոր նախապայման

Մայիս

1 շաբաթ– Մայիս՝հաղթանակների ամիս

2 շաբաթ – Առարկայական շաբաթ. Հանրահաշիվ, Երկրաչափություն

3 շաբաթ – Ուսումնական տարվա ամփոփում

4 շաբաթ – Ամառային արձակուրդներ